# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան
համայնք, ՀՀ Արմավիրի մարզ, գ.Մայիսյան, 1-ին փողոց, տուն 52, Հեռ.
(093) 490666 , mayisyan.armavir@mta.gov.am

**N 46**
***03 մարտ 2021թ.***

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

**Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի ավագանու 2021 թ մարտի 1 -ի թիվ 3 արտահերթ նիստի թվով 5 որոշումները:**

Առդիր՝ 11 էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԵՍԱՅԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ

## ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1 մարտի **2021** թ.

թիվ 3 արտահերթ նիստի
թիվ 16-Ա որոշում

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով

Մայիսյան համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (4) դեմ (0) ձեռնպահ (0)

1. Ս. Իսրաելյան
2. Ա. Հարությունյան
3. Խ. Մովսիսյան
4. Ա. Սիմոնյան

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2021 թ. մարտի 1 գ.Մայիսյան

Հավելված
Մասիսյան համայնքի ավագանու
2021 թվականի մարտի 1-ի թիվ 3
արտահերթ նիստի թիվ 16-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ե. Մովսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 69-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ե. Մովսիսյան

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՄՈՒՏՔԵՐԻ ՍԿԶԲՆԱՄԱՍՈՒՄ ՏԵՍԱԽՑԻԿՆԵՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ե. Մովսիսյան

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՇՏԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐՆ ՀԱՐԹԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ե. Մովսիսյան

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿ.՝ Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

1 մարտի 2021 թ

թիվ 3 արտահերթ նիստի
թիվ 17-Ն որոշում

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 69 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով՝ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության 2021 թվականի փետրվարի 16-ի թիվ // 3551-2021 գրությամբ փորձագիտական եզրակացությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 69-Ն որոշման մեջ կատարելու լրացումներ և փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (4) դեմ (0) ձեռնպահ (0)

1. Ս. Իսրաելյան
2. Ա. Հարությունյան
3. Խ. Մովսիսյան
4. Ա. Սիմոնյան

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2021 թ. մարտի 1 գ.Մայիսյան

Հավելված
Մասիսյան համայնքի ավագանու
2021 թվականի մարտի 1-ի թիվ 3
արտահերթ նիստի թիվ 17-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
**2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. 2021 թ. տարեսկզբի վարչական բյուջեի ազատ մնացորդը՝ 8241.0 հազար դրամը տեղափոխել ֆոնդային մաս:
2. Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 8370.9 հազար դրամը հատկացնել հետևյալ հոդվածներին

1) 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 5129 հոդվածին՝ 300.0 հազար դրամ սարքավորումներ ձեռք բերելու համար, 5122 հոդվածին՝ 350.0 դրամ վարչական սարքավորում ձեռք բերելու համար:

2) 04 բաժնի 5-րդ խմբի 1-ին դասի 5113 հոդվածին՝ 5420.9 հազար դրամ Ճանապարհների հիմնանորոգման համար:

3) 04 բաժնի 2-րդ խմբի 4-րդ դասի 5113 հոդվածին՝ 950.000 դրամ, ոռոգման ջրագծի վերանորգման համար:

4) 01 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 5129 հոդվածին՝ 400.0 դրամ սարքավորումներ ձեռք բերելու համար:

5) 08 բաժնի 2-րդ խմբի 3-րդ դասի 5129 հոդվածին՝ 950.0 դրամ գույք ձեռք բերելու համար: